UNDP

# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄԸ՝ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ





ԵՐԵՎԱՆ 2011

# Գենդերային ուղղորդումը՝ աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության մշակման գործընթացում

*Գործնական ուղեցույց*

Երևան 2011

Ձեռնարկը մշակվել և տպագրվել է ՄԱԶԾ «Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի միջոցներով:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետներն անպայման չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի կամ ՄԱԶԾ պաշտոնական տեսակետներն ու քաղաքականությունը:

# Բովանդակություն


*Ուղեցույցներ՝ մշակելու գենդերային զգայուն աղետների ռիսկի նվազեցման քաղաքականություն ........ 5*

*Ներածություն ........ 5*

*ԱՌՆ-ում գենդերային ուղղորդման գործնական կիրառումը ........ 6*

*ԳԵՆԴԵՐԱՅՆԻՆ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՏԱՍԸ ՔԱՅԼԵՐՆ ԵՆ. ........ 8*

*Քայլ 1. Գենդերային ուղղորդման շահառուները. ովքեր են որոշումներ կայացնողները ........ 8*

*Ովքե՞ր են շահագրգիռ կողմերը: Արդյո՞ք դրանք ներառում են անհասներ, թե՝ «գենդերային տեսանկյունից» խմբեր ........ 8*

*Արդյո՞ք ընդգրկված բոլոր հաստատություններում և մարմիններում գոյություն ունի գենդերային հավասարակշռություն ........ 8*

*Որտե՞ղ կարելի է ձեռք բերել գենդերային հարցերով մասնագետներ ........ 9*

*Ի՞նչ գիտելիք և հմտություններ կարող են տարբեր շահագրգիռ կողմեր ներդնել 9*

*Քայլ 2. Գենդերային ուղղորդման պլանավորումը. ո՞րն է խնդիրը ........ 9*

*Ո՞րն է ծրագրի կամ քաղաքականության մշակման նախաձեռնության թեման9*

*Քայլ 3. Դեպի գենդերային հավասարություն. ո՞րն է նպատակը ........ 10*

*Քայլ 4. Իրադրության պատկերումը. ի՞նչ տեղեկությունների ենք տիրապետում ........ 10*

*Գործնական պատկերում. վարժություն 1 ........ 11*

*Գործնական պատկերում. վարժություն 2. քաղաքականության առումով գենդերային տեսանկյունից ........ 12*

*Քայլ 5. Խնդրի մշակումը. ուսումնասիրություն և վերլուծություն ........ 13*

*Քայլ 6. Գործողությունների ուղղության որոշումը. քաղաքականության միջամտությունների մշակում և բյուջեի ձևավորում ........ 13*

*Ինչպես կոտրել անվստահությունը և ձեռք բերել գենդերային հարցերի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ........ 15*

*Քայլ 7. Քարոզչական ռազմավարություններ. գենդերը կարևոր է ........ 15*

*Քայլ 8. Մոնիթորինգ. ուշադրության կենտրոնացում գենդերային հարցերին........ 16*

*Գենդերային զգայուն թիրախներ և ցուցանիշներ ........ 17*

*Քայլ 9. Գնահատում. ի՞նչ արդյունավետությամբ ենք աշխատել........ 19*

*Քայլ 10. Գենդերային հաղորդակցում ........ 21*

*Գենդերային ուղղորդման հարցաշար՝ ծրագրերի կամ քաղաքականության փաստաթղթերի վերլուծության համար ........ 22*

*Գենդերային զգայուն օրենսդրության մշակում ........ 24*

*Աղբյուրներ ........ 25*

## Երախտագիտության խոսք

*«Գենդերային ուղղորդումը աղետների ռիսկերի նվազեցման քաղաքականության մշակման գործընթացում» գործնական ուղեցույցը պատրաստվել է ՄԱԶԾ «Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի գենդերի տեղական փորձագետ Նունե Հարությունյանի կողմից:*

*Սույն ձեռնարկի նպատակն է՝ աջակցել աղետների ռիսկերի նվազեցման ներքո (ԱՌՆ) ընդգրկված շահագրգիռ կողմերին՝ ինտեգրելու գենդերը ԱՌՆ քաղաքականության մեջ, ինստիտուցիոնալ և իրավական դաշտում, ինչպես նաև ծառայելու որպես գործնականում կիրառվող գործիք՝ գենդերային վերլուծությունը ազգային գործողությունների ծրագրերում, տարեկան աշխատանքային պլաններում, ռազմավարություններում և այլ ծրագրերում ներառելու համար: Ձեռնարկն ընդգրկում է գործնական վարժություններ և մեթոդաբանություն՝ ԱՌՆ-ում գենդերային ուղղորդման և վերլուծության վերաբերյալ: Ձեռնարկը կարող է ծառայել որպես կարևոր գործիք տարբեր լսարանների համար:*

## Ուղեցույցներ՝ մշակելու գենդերային զգայուն աղետների ռիսկի նվազեցման քաղաքականություն

### Ներածություն

*Ազգային ռազմավարություններում և քաղաքականություններում, այդ թվում՝ երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերում գենդերային ուղղորդումը կարևոր քայլ է՝ գենդերային հարցերը և գենդերային վերլուծությունը դրանց մշակման, իրականացման և գնահատման բոլոր փուլերում ներառելու համար: Գենդերային ուղղորդման նպատակն է փոխել մարդկանց և կազմակերպությունների մտածելակերպն ու աշխատելաոճը, որպեսզի մարդկանց կյանքի տարբերություններն ու բարդությունները, նրանց կարիքներն ու առաջնահերթությունները ավտոմատ և կանոնավոր կերպով իրենց համապատասխան տեղը գրավեն բոլոր մակարդակներում և ոլորտներում, ինչպես նաև ազգային քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման բոլոր փուլերում:*

*Գենդերային ուղղորդման սկզբունքներն են՝*

- ✓ առաջնահերթությունների սահմանման և ռեսուրսների հատկացումների մասին որոշումների կայացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն,
- ✓ սոցիալական հնարավորությունների, ռեսուրսների և զարգացման արդյունքների հավասար հասանելիություն, ինչպես նաև դրանց նկատմամբ հավասար վերահսկողության մասչելիություն կանանց և տղամարդկանց համար,
- ✓ կանանց և տղամարդկանց հավասար ճանաչում և կարգավիճակ,
- ✓ մարդու իրավունքների հավասար կիրառում կանանց և տղամարդկանց նկատմամբ,
- ✓ կանանց և տղամարդկանց կյանքի որակի հավասար չափանիշներ և դրանց բարելավումներ,
- ✓ կանանց և տղամարդկանց աղքատության նվազեցում, որը գնահատվում է մի շարք ցուցանիշների միջոցով, հատկապես այն ոլորտներում, որտեղ առկա են գենդերային էական բացեր,
- ✓ տնտեսական աճի և կայուն զարգացման արդյունավետության բարելավում:

*Մշակվել են մի շարք տեխնիկական միջոցներ և գործիքներ, որոնք օժանդակում են քաղաքականությունների և ծրագրերի վերլուծաբաններին՝ քաղաքականության ամբողջ ցիկլում գենդերային հարցերն ուղղորդելու համար: Այդպիսի օրինակներ են՝*

- ✓ ***Գենդերային հարցերի իրազեկվածության և գենդերային զգայունության*** վերաբերյալ դասընթացների ծրագրեր,
- ✓ ***Սեռային բաշխվածությամբ և գենդերային վիճակագրություն***, որը հավաքագրում և ներկայացնում է անհատական տվյալներ՝ ըստ կանանց և տղամարդկանց, տղաների և աղջիկների, ինչպես նաև տրամադրում է կոնկրետ տվյալներ՝ առաջ եկած գենդերային խնդիրների վերաբերյալ,
- ✓ ***Գենդերային վերլուծություն,*** որը բացահայտում է կանանց և տղամարդկանց համար ռեսուրսների հասանելիության և վերահսկողության, որոշումների կայացման և առավելություններից օգտվելու ոլորտներում, ինչպես նաև քաղաքականությունների, երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի վրա նրանց ունեցած ուղղակի և անուղղակի ազդեցությունների տարբերությունների հիմքում ընկած պատճառները,
- ✓ ***Գենդերային ցուցանիշներ և ինդեքսներ,*** ինչպիսիք են «Գենդերը և զարգացումը» ինդեքսը և «Գենդերային հնարավորությունների ընդլայնման» չափորոշիչը, որոնք հնարավորություն են տալիս վերահսկել գենդերային հավասարության ուղղությամբ կատարված առաջընթացը և գնահատել կոնկրետ մոտեցումների և ռազմավարությունների ազդեցությունը,
- ✓ ***Գենդերային բյուջետավորում և գենդերային աուդիտ,*** որոնց միջոցով վերլուծվում է կանանց և տղամարդկանց կարիքների բավարարմանն ուղղված ռեսուրսների հատկացումները, և հաշվետվություն է ներկայացվում այն մասին, թե որքանով են պետական մարմինները իրականացնում իրենց կողմից ստանձնած գենդերային ուղղորդման հարցերը՝ հատկացնելով կոնկրետ ֆինանսական միջոցներ՝ գենդերային և կանանց խնդիրները հասցեագրելու համար:

*Վերոնշյալ գործոնները կարևոր գործիքներ են քաղաքականություններ մշակողների, պլանավորողների և ծրագրեր մշակողների, իրականացնողների, մոնիթորինգ իրականացնողների և գնահատողների համար՝ գենդերային հարցերն իրենց աշխատանքում ուղղորդելու համար: Այնուամենայնիվ, գործիքների արժեքն ու կիրառելիությունը կախված է հետևյալից՝*

- ✓ այնպիսի մասնագետների առկայությունից, որոնք ունեն համապատասխան կարողություններ՝ այդ գործիքները կիրառելու համար,
- ✓ նրանից, թե որքանով է այդ գործիքների գործածությունը պարտադիր և դրանց առօրյա կիրառումը հաստատագրված կանոնադրություններում և գործող ընթացակարգերում,
- ✓ նրանից, թե որքանով է դրանց կիրառումը գնահատվում և պարգևատրվում համապատասխան խրախուսման միջոցներով,
- ✓ թե որքանով են այդ գործիքների կիրառման արդյունքում ձեռք բերված բացահայտումները գնահատվում և արդյունքները համապատասխան կերպով օգտագործվում:

## ԱՌՆ-ում գենդերային ուղղորդման գործնական կիրառումը

**Արդյո՞ք գենդերային ուղղորդումն ԱՌՆ-ում իսկապես բարդ է:**

**Այնքան էլ չէ:**

*Հիմնականում, գործնական գենդերային ուղղորդումն իր մեջ ներառում է հարցաշարի*

*կիրառում, որի միջոցով անդրադառնում ենք նշված հարցերին՝ համոզվելու, որ ոչ մի բան ուշադրությունից դուրս չի մնացել: Գենդերային ուղղորդում նշանակում է կատարել ճիշտ հարցադրումներ, որպեսզի հնարավոր լինի ԱՌՆ քաղաքականության իրականացման գործընթացում արդյունավետորեն* **օգտագործել ռեսուրսները:** *Գենդերային ուղղորդումը անհրաժեշտ գործընթաց է, որը թույլ է տալիս ամենաարդյունավետ կերպով ձեռք բերել գենդերային հավասարություն և նվաճել այլ ԱՌՆ ազգային քաղաքականության նպատակներ:*

*Գենդերային ուղղորդումն այնպիսի մի հասկացություն է, որի հետ շատերն են հեշտությամբ համաձայնում, սակայն քչերն են այն կանոնավոր կերպով կիրառում: Նույնը կարելի է ասել նաև աղետների ռիսկի նվազեցման մասին: Երբ առաջ է գալիս գենդերային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում ուղղորդելու հարցը, կառավարությունները և համապատասխան մասնագետները հայտնաբերում են բացեր քաղաքականության և գործնական ուղեցույցներում: Նրանք բոլորն էլ գիտեն, թե ինչու է անհրաժեշտ իրականացնել գենդերային ուղղորդումը, սակայն միշտ չէ, որ գիտեն՝ թե ինչպես: Եվ սա այն պատճառով չէ, որ առաջադրանքը չափազանց բարդ է, այլ այն, որ չկա բավականաչափ ուղղորդում և խնդրի գործնական ըմբռնում:*

*Կայուն զարգացման համար մեր հիմնական նպատակին հասնելու և տղամարդկանց և կանանց՝ աղետների դիմակայման կարողությունների զարգացմանը նպաստելու համար կարող ենք կիրառել սույն ուղեցույցը՝ հաշվի առնելով հետևյալ նպատակակետերը՝*

- ✓ ընդլայնել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գոյություն ունեցող գենդերային խնդիրների և կարիքների վերաբերյալ ըմբռնումը,
- ✓ զարգացնել կառավարության կարողությունները՝ հասցեագրելու գենդերային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ոլորտում,
- ✓ խրախուսել կառավարություններին՝ աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերող օրենսդրության, քաղաքականությունների և ծրագրերի մեջ գենդերային խնդիրները ինտեգրելու համար:

*Այս գործնական ուղեցույցի նպատակն է աջակցել գենդերային ուղղորդման վերաբերյալ տեսական նյութը գործնականի վերածելուն և ցույց տալ, թե ինչպես ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել գենդերային ուղղորդմամբ ռիսկի գնահատումները, իրականացնել գենդերային զգայուն վաղ ազդարարման համակարգեր և կիրառել գենդերային զգայուն ցուցանիշներ՝ վերահսկելու գենդերային ուղղորդման առաջընթացը: Այս նպատակին հասնելու համար ծրագրերի կամ քաղաքականությունների գործընթացներում գոյություն ունեն 10 տարբեր, սակայն փոխադարձաբար իրար հետ կապված փուլեր: Գենդերային ուղղորդումն առանձին գործողություն չէ. այն քաղաքականությունների կամ ծրագրերի մշակման և իրականացման ցիկլի անբաժանելի մասն է և պետք է իրականացվի ռազմավարության կամ ծրագրի մշակման գործընթացում: Վերջինս հնարավորություն կտա կանանց և տղամարդկանց կարիքներն ինտեգրելու ռազմավարության մեջ գործընթացի անմիջապես սկզբից և հետագայում վերահսկել՝ մշակված գենդերային զգայուն ցուցանիշների միջոցով:*

## ԳԵՆԴԵՐԱՅՆԻՆ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՏԱՍԸ ՔԱՅԼԵՐՆ ԵՆ.

### Քայլ 1. Գենդերային ուղղորդման շահառուները. ովքեր են որոշումներ կայացնողները

*Թեև գոյություն ունի ընդհանուր պատկերացում յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հիմնական և ոչ հիմնական դերակատարների դերերի և պարտականությունների մասին, այնուամենայնիվ, գենդերային ուղղորդման միջոցով յուրաքանչյուր իրավիճակում հստակ սահմանվում և ներառվում են կանանց և տղամարդկանց (տարբեր տարիքի, զբաղվածության, և այլն) կարիքները: Գենդերային ուղղորդման միջոցով նաև սահմանվում են անհրաժեշտ ցուցանիշներ, որոնք ցույց կտան տարբեր շահառուների կարիքների և նրանց տրամադրվելիք օգնության տարբերությունները. այս ամենը որոշում կայացնողները պետք է հաշվի առնեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքի և յուրաքանչյուր կոնկրետ ռազմավարության համար:*

*Այս բաժինը վերաբերում է այն մարդկանց, ովքեր ընդգրկված են ԱՌՆ քաղաքականությունների մշակման գործընթացում: Այս անհատները, իրենց արժեքների և գենդերային խնդիրների մասին պատկերացման հետ միասին էապես կազդեն ԱՌՆ ազգային քաղաքականության կամ որևէ ծրագրի արդյունքների վրա:*

*Այս բաժնում մենք փորձում ենք գտնել հետևյալ չորս հիմնական հարցերի պատասխանները.*

### Ովքե՞ր են շահագրգիռ կողմերը: Արդյո՞ք դրանք ներառում են անհատներ, թե՝ «գենդերային տեսանկյունից» խմբեր

*Գենդերային ուղղորդում նշանակում է, որ «գենդերային» շահագրգիռ կողմերը պետք է բացահայտվեն և ընդգրկվեն աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության ամբողջ գործընթացում: Բազմաթիվ շահագրգիռ կողմերն ապահովում են ավելի մեծ հաշվետվողականություն և քաղաքականությունների մշակման գործընթացի ավելի մեծ թվով տարբերակներ: Սա նաև հնարավորություն է տալիս ծանր ու թեթև անել տարբեր և իրար հակասող տեսակետները: Բազմաթիվ տեսակետների քննարկման արդյունքում մշակվում են ավելի որակյալ քաղաքականություններ:*

### Արդյո՞ք ընդգրկված բոլոր հաստատություններում և մարմիններում գոյություն ունի գենդերային հավասարակշռություն

*Եթե շահագրգիռ կողմերի կամ քաղաքականության մշակման հիմնական խմբում գոյություն ունի գենդերային զգալի անհավասարակշռություն (օրինակ, մեկ սեռի ներկայացուցչից 30%-ից պակաս), անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ խմբում ընդգրկելու ավելի շատ թվով այն սեռի ներկայացուցիչներին, որոնք պակասում են խմբում՝ լինի դա կին, թե տղամարդ: Անհրաժեշտության դեպքում, ներդրեք քվոտաների կիրառման մեխանիզմը: Երկու սեռի բավարար ներկայացուցչությունը ժողովրդավարական և համապարփակ քաղաքականության մշակման ցուցանիշ է, որտեղ հաշվի են առնվում բոլոր տեսակետները:*

### Որտե՞ղ կարելի է ձեռք բերել գենդերային հարցերով մասնագետներ

*Գենդերային մասնագետներ/փորձագետներ ունեցող շահագրգիռ կողմերը կաջակցեն գենդերային ուղղորդման հիմնական կետերը բացահայտելու և քաղաքականության մշակման ամբողջ գործընթացում գենդերային ուղղորդումն իրականացնելու համար: Այս փորձագետները կարևոր գործընկերներ են: Նման փորձագետներ լինում են քաղաքականություն մշակող գործընկերների, գիտական աշխատողների, խորհրդատուների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների/համայնքային խմբերի կամ զարգացման գործընկերների շրջանում: Գենդերային փորձագետների ներգրավումը գործընթացում արդեն իսկ ուղղորդում է՝ իր ամենանախնական փուլում:*

### Ի՞նչ գիտելիք և հմտություններ կարող են տարբեր շահագրգիռ կողմեր ներդնել

*«Գենդերային շահագրգիռ» կողմերին գործընթացում ներառելիս հարկ է հաշվի առնել, թե նրանք ինչպիսի ներդրումներ կարող են ունենալ քաղաքականության կամ ծրագրի մշակման գործընթացում: Օրինակ, ԱՌՆ ճյուղային նախարարությունները և այլ ոլորտում կայացնողներ, փորձագետներ, քաղաքացիական հասարակության և գիտական ոլորտի ներկայացուցիչներ կարող են աջակցել քաղաքական կամքի ձևավորմանը, իսկ վիճակագրական հաստատությունները կարող են տրամադրել արժեքավոր քանակական տվյալներ: Հասարակական և համայնքային այլ կազմակերպություններ կարող են ուղիղ կապ հաստատել համայնքների կանանց և տղամարդկանց հետ և աջակցել բացահայտելու նրանց կարիքները և ցանկությունները՝ կապված կազմակերպչական, իրավական և քաղաքականությունների մշակման կարողությունների, ռիսկի բացահայտման, գնահատման, մոնիթորինգի և վաղ ազդարարման, ինչպես նաև գիտելիքի կառավարման և ուսուցանման, աղետների հիմքում ընկած ռիսկի գործոնների նվազեցման և արդյունավետ արձագանքման և վերականգնման համար անհրաժեշտ պատրաստվածության հետ:*

## Քայլ 2. Գենդերային ուղղորդման պլանավորումը. ո՞րն է խնդիրը

*Ճիշտ ուղղվածություն ընտրելու համար անհրաժեշտ է պատկերացում կազմել այն մտքի կամ նյութի մասին, որի հետ առնչվում ենք. այլ կերպ ասած՝ ո՞րն է ծրագրի կամ քաղաքականության մշակման նախաձեռնության թեման: Օրինակ, քաղաքականության մշակման նախաձեռնության թեման է քաղաքային և գյուղական համայնքներում հզորացնել աղետների ռիսկի նվազեցման տեղական կարողությունները: Քանի որ մեր քննարկման առարկան գենդերային ուղղորդման գործընթացն է, մեր նպատակը պետք է լինի ուսումնասիրել թեման գենդերային տեսանկյունից՝ հասկանալու, թե որտեղ, ինչու և ինչպես է անհրաժեշտ կիրառել գենդերային ուղղորդման կոնկրետ նախաձեռնությունները: Այս բաժնում անհրաժեշտ է առաջին հերթին սահմանել քննարկվող քաղաքականության կամ ռազմավարության հիմնական նպատակը: Նշվածը կարելի է իրականացնել՝ պատասխանելով մեկ պարզ հարցի.*

### Ո՞րն է ծրագրի կամ քաղաքականության մշակման նախաձեռնության թեման

*Օրինակ, քաղաքականության մշակման նախաձեռնության թեման է քաղաքային և*

*գյուղական համայնքներում աղետների ռիսկի նվազեցման տեղական կարողությունների հզորացումը: Քանի որ մեր քննարկման առարկան գենդերային ուղղորդման գործընթացն է, ապա մեր նպատակն է ուսումնասիրել այն գենդերային տեսանկյունից՝ հասկանալու, թե որտեղ, ինչու և ինչպես է անհրաժեշտ կիրառել գենդերային ուղղորդման կոնկրետ նախաձեռնությունները:*

*Հեսևյալ հարցը հնարավորություն կտա պայմանականորեն սահմանել «գենդերային խնդիրները».*

*<u>Արդյո՞ք աղետները տարբեր ձևով են ազդում կանանց և տղամարդկանց վրա:</u>*

*Փորձը ցույց է տալիս, որ համարյա բոլոր դեպքերում աղետները տարբեր ձևով են ազդում կանանց և տղամարդկանց վրա: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ավելի խորն ուսումնասիրել կանանց և տղամարդկանց վրա ազդող գործոնների տարբերությունները:* ***Գենդերային վերլուծությունը կարևոր գործիք է՝ հասկեցնելու աղետների ռիսկի նվազեցման ոլորտում կոնկրետ գենդերային ուղղությունները և դրանց գործնական կիրառումը:***

*Այս փուլում, գործընթացը սկսում ենք՝ սահմանելով հնարավոր «գենդերային խնդիրները»: Վերոնշյալ օրինակի առումով, այս փուլում անհրաժեշտ է սահմանել, որ կանայք աղետների դիմակայման առումով ավելի ցածր մակարդակի պատրաստվածություն ունեն. կանայք հաճախ պատասխանատու են ոչ միայն իրենց սեփական պաշտպանության և ապահովության համար, այլև շատ հաճախ նաև իրենց երեխաների, տարեցների կամ այլ հարազատների համար, որոնք ապրում են նույն ընտանիքում: Թեև այս փուլում դեռևս հնարավոր չէ բացահայտել կոնկրետ գենդերային խնդիրները, որոնք պահանջում են քաղաքականության մակարդակով լուծումներ, այս փուլում հնարավոր է հասկանալ համեմատաբար «գենդերային առումով չեզոք» խնդիրների գենդերային հարցերը:*

## Քայլ 3. Դեպի գենդերային հավասարություն. ո՞րն է նպատակը

*Քաղաքականության մշակման նախաձեռնության «թեման» որոշելուց հետո անհրաժեշտ է սահմանել նպատակը: Աղետների ռիսկի նվազեցման նպատակը պարզելու համար, մենք հարցնում ենք՝ «Ի՞նչ ենք ուզում նվաճել»: Մեզ հարկավոր է բացահայտել գենդերային հարցերը ազգային ԱՌՆ ռազմավարությունում: Հավասարապես կարևոր է նաև գենդերային հարցերը հասկեցնել քաղաքականության նպատակի մեջ, որն անելու համար պետք է սահմանել գենդերի հետ կապված նպատակները, որոնք լինում են* ***լրացնող*** *(այն նպատակները, որոնք լրացնում են քաղաքականությունների և ծրագրերի գենդերային բացերը) և* ***փոխակերպող*** *(այն նպատակները, որոնք քաղաքականությունների կամ ծրագրերի միջոցով նպաստում են գենդերային հավասարությանը):*

## Քայլ 4. Իրադրության պատկերումը. ի՞նչ տեղեկությունների ենք տիրապետում

*«Իրադրության պատկերում» բաժնում պետք է սկսենք մտածել հնարավոր քաղաքականությունների վերամշակման մասին, որն իրականացնելու համար անհրաժեշտ է ցուցակագրել այն տեղեկությունները, որ ազդեցություն կունենան առաջարկվող քաղաքա*

*կանության վրա: Այդ տեղեկությունների մեջ հասկամես տեղ են գտնում քաղաքականության թեմային առնչվող գենդերային խնդիրներին վերաբերող հարցեր.*

- ✓ *Ի՞նչ տեղեկություններ կան այն մասին, թե ինչ տարբերությամբ է ԱՌՆ-ն ազդում կանանց և տղամարդկանց վրա:*
- ✓ *Ի՞նչ տեղեկատվության պակաս ունենք:*
- ✓ *ԱՌՆ-ն գենդերային զգայուն դարձնելու հետ կապված ինչպիսի՞ ծրագրեր կամ քաղաքականության միջամտություններ են արդեն իրականացվել:*
- ✓ *Ինչպիսի՞ ծրագրեր կամ քաղաքականության միջամտություններ գոյություն ունեն ներկայումս, որոնք վերաբերում են ԱՌՆ-ի գենդերային զգայունությանը:*
- ✓ *ԱՌՆ-ն գենդերային զգայուն դարձնելու հետ կապված ինչպիսի՞ այլ միջամտություններ են պլանավորվել:*

*Վերոնշյալ հարցերի պատասխանները կօգնեն ուշադրությունը կենտրոնացնել բացերը լրացնելու վրա՝ սահմանելով անհրաժեշտ ուսումնասիրություններ և պլանավորելով լրացուցիչ նախաձեռնություններ: Այս հարցերի պատասխանները կօգնեն նաև խուսափել կրկնապատկումներից:*

*Առաջարկում ենք կիրառել երեք գործիք և վարժություն, որոնք կօգնեն պատասխանել վերոնշյալ հարցերին.*

1. *Պատկերման վարժություն,*
2. *Քաղաքականության ուսումնասիրում գենդերային տեսանկյունից, և*
3. *Օրենսդրության ուսումնասիրում գենդերային տեսանկյունից:*

## Գործնական պատկերում. վարժություն 1

*Օգտակար գործիքներից է «պատկերման վարժությունը», որը կիրառվում է այն ոլորտի կամ քաղաքականության խնդրի նկատմամբ, որը մենք հասցեագրում ենք, որպեսզի կանոնավոր կերպով ցուցակագրվեն գոյություն ունեցող և անհրաժեշտ տեղեկությունները: Այս գործիքը կիրառվում է նաև ընթացիկ և պլանավորված միջամտությունների իրականացումից առաջ: Այս վարժության իրականացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ անհրաժեշտ չեն:*

***Պահանջվող ժամանակը***. *ստորև ներկայացված աղյուսակը լրացնելու համար շատ ժամանակ չի պահանջվում: Սակայն, եթե հաշվի առնենք այն փաստը, որ հնարավոր է սպիտված լինենք սպասել գործընկերների ներդրումներին, ապա վարժությունը կարող է պահանջել մեկից մի քանի շաբաթ:*

***Տեղեկատվության օգտակար աղբյուրներ.***

- ✓ *Գենդերին և ԱՌՆ-ին վերաբերող պետական օրենսդրական տվյալների բազա,*
- ✓ *Գենդերին և ԱՌՆ-ին վերաբերող պետական փաստաթղթերի տվյալների բազա,*
- ✓ *Կառավարության կողմից իրականացված ուսումնասիրությունների տվյալների բազա,*
- ✓ *Նվիրատու կազմակերպությունների կողմից իրականացվող տեխնիկական աջակցության տվյալների բազա (ծրագրեր, ուսումնասիրություններ, հաշվետվություններ, նախաձեռնություններ, և այլն),*
- ✓ *Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցառումների մասին տվյալների բազա:*

***Մեթոդաբանությունը***. *Մեր ունեցած տեղեկությունների, ինչպես նաև այն տեղեկությունների հիման վրա, որ կարող ենք ձեռք բերել գործընկերներից կամ այլ շահագրգիռ կողմերից, պետք է տող առ տող լրացնենք ստորև ներկայացված աղյուսակը.*

***Առաջին տողը (ոլորտային կամ քաղաքականության հարցեր).*** *Ներկայացնել քաղաքականության հիմնական մտահոգող հարցերը (դրանք կարող են լինել ենթա-ոլորտներ կամ ենթահարցեր): Օգտագործեք այնքան սյունակներ, որքան որ անհրաժեշտ է:*

***Երկրորդ տողը (գենդերային հարցեր).*** *Ներկայացրեք ենթահարցերի հնարավոր գենդերային կողմերը (այս հարցերը կարող են բացահայտվել գենդերային ուղղորդման Քայլ 2-ի ժամանակ տրվող այն հարցի արդյունքում, թե արդյո՞ք աղետները միևնույն ձևով են ազդում կանանց և տղամարդկանց վրա:*

*Ուղորդում՝ Գենդերային վերլուծություն, «Գենդերային հարցեր» բաժնում:*

## Գործնական պատկերում. վարժություն 2. քաղաքականության աուդիտ գենդերային տեսանկյունից

*Գենդերային տեսանկյունից քաղաքականության ավելի խորը ուսումնասիրությունը հնարավորություն կտա գնահատելու, թե որքանով են գենդերային խնդիրները ներկայումս արտացոլված պետական քաղաքականություններում և ծրագրերում (կարող ենք ընդգրկել գենդերային հարցերով մասնագետի՝ աջակցություն տրամադրելու նպատակով):*

*Այս գործընթացը ներառում է քաղաքականության ուսումնասիրման հետևյալ տարրերը.*

***Գենդերային հավասարությունը՝ որպես քաղաքականության առաջնահերթություն***

*Գոյություն ունի արդյո՞ք ազգային (մարզային կամ տեղական) մակարդակում գենդերային հավասարության հզորացման որևէ մանդատ և քաղաքական կամքի արտահայտում: Կարևոր է այնպիսի քաղաքականության (օրինակ՝ գենդերային հավասարության ազգային, մարզային կամ տեղական ծրագիր) առկայությունը, որը հստակ կերպով արտահայտում է գենդերային հավասարության հարցը կառավարության օրակարգում լինելու փաստը, քանի որ այն հիմք է հանդիսանում՝ գենդերային տեսանկյունից (այսինքն՝ գենդերային ուղղորդմամբ) ոլորտային քաղաքականություններ մշակելու համար:*

***Օրինակ 1. Գենդերային քաղաքականության հայեցակարգ Հայաստանում. ներածություն***

*Այսպիսով, քաղաքականության աուդիտը պետք է սկսել բացահայտելով, թե արդյո՞ք գոյություն ունի գենդերային հավասարության նման կարևոր քաղաքականություն կամ քաղաքականություններ: Այնուհետև, անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյո՞ք նման քաղաքականության մեջ հստակ արտացոլված է՝ ինչպես և ում կողմից է իրականացվում գենդերային ուղղորդումը, քանի որ այն պետք է ներկայացնի հաշվետվողականության և պատասխանատվության գծերը: Յուրաքանչյուր համոզիչ և իրատեսական քաղաքականություն պետք է արտացոլի կոնկրետ նպատակները, խնդիրները և հաջողության ցուցանիշները:*

## Քայլ 5. Խնդրի մշակումը. ուսումնասիրություն և վերլուծություն

*Այս փուլում անհրաժեշտ է իրականացնել կամ պատվիրել ուսումնասիրություն, որը կլրացնի գոյություն ունեցող բացերը: Սա բացարձակ կարևոր գործողություն է, որը կատարվի ցանկացած մշակվող ծրագրի կամ քաղաքականության իրատեսական լինելը, ինչպես նաև՝ ֆինանսական, և՝ նպատակային արդյունավետությունը: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է իրականացնել գենդերային վերլուծություն. այսինքն՝ կամ պետք է կատարել քաղաքականության ոլորտին վերաբերող ընդհանուր ուսումնասիրություն, որն իր մեջ կներառի գենդերային բաղադրիչը, կամ էլ անհրաժեշտ է ուսումնասիրել քաղաքականության ոլորտի հետ կապված մեկ կամ մի քանի գենդերային բնագավառները:*

*Այս փուլը ներառում է.*

- ✓ *ուսումնասիրության հարց(եր)ի ձևակերպում,*
- ✓ *ուսումնասիրության մշակում և իրականացում, ԿԱՄ*
- ✓ *ուսումնասիրության իրականացման հայտարարում, առաջարկների ընդունում և ուսումնասիրության պատվերում,*
- ✓ *գնահատում և ուսումնասիրության արդյունքներից եզրակացությունների հանգում:*

*Գենդերային վերլուծությունը գենդերային ուղղորդման հիմնական մասն է: Գենդերային ուղղորդման այս ուղեցույցի մաս կազմող Գենդերային վերլուծության բաժնում ներկայացված են տեղեկություններ գենդերային վերլուծության տարբեր մակարդակների, մեթոդաբանությունների մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես կատարել նման վերլուծություն:*

## Քայլ 6. Գործողությունների ուղղության որոշումը. քաղաքականության միջամտությունների մշակում և բյուջեի ձևավորում

*Այս փուլում արդեն առկա է ընդհանուր պատկերացում միջամտությունների մասին: Այժմ անհրաժեշտ է որոշել, թե որն է գործողությունների ամենահամապատասխան ուղղությունը:*

***Քաղաքականության տարբերակների ընտրության վճռական գործոններ***

*Շատ հազվադեպ է հեշտ լինում քաղաքականության կամ ծրագրի միջամտության «ճիշտ» ուղղության ընտրությունը: Վերջինիս համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք չափազանց կարևոր գործոններ, ինչպիսիք են՝*

***ֆինանսական արդյունավետությունը*** *– ինչպե՞ս կարելի է համատեղել ցանկալի արդյունքները սահմանափակ ռեսուրսների հետ:*

***նպատակային արդյունավետությունը*** *– որքանո՞վ է հնարավոր քաղաքականության միջամտությամբ ազդել իրավիճակի վրա:*

***գենդերային հավասարությունը*** *– ինչպե՞ս և որքանո՞վ է հնարավոր հաղթահարել կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեցող սոցիալական և պատմական անհավասարությունները:*

***այլ կարևոր նպատակներ -*** *ինչպե՞ս և որքանո՞վ է հնարավոր հաղթահարել մարդու իրա-*

*վունքների հարցերը, առաջ քաշել շրջակա միջավայրի պաշտպանության առաջնահերթությունները և հասցեագրել այլ սոցիալական անհավասարություններ (կապված փոքրամասնությունների, քաղաքային և գյուղական խմբերի, ծայրահեղ աղքատության մեջ ապրող խմբերի և այլոց հետ):*

**Գենդերային քաղաքականության հայեցակարգը** *(այսուհետ՝ Հայեցակարգ) սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ սեռից:*

*Հայեցակարգը հիմնված է ՀՀ Սահմանադրության և օրենքների, Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ուղղորդիչ հանդիսացող այլ միջազգային քաղաքական փաստաթղթերի վրա:*

*Հայեցակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ձևավորման նախադրյալը գենդերային հավասարությունն է՝ որպես ժողովրդավարական գերակա արժեք, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման:*

*ՀՀ կառավարությունը 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրում գենդերային հավասարությունը՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը ճանաչել է որպես քաղաքականության առաջնահերթ ուղղություն:*

*Գենդերային հավասարության ձեռքբերումը ենթադրում է.*

- ✓ հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծում կանանց և տղամարդկանց անհատական ներուժի իրագործման համար,
- ✓ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երկու սեռերի հավասար մասնակցության ապահովում՝ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը աջակցելու համար,
- ✓ սեռի հատկանիշով խտրականության հաղթահարում և կանանց ու տղամարդկանց փաստացի հավասարության ձեռքբերում,
- ✓ հավասար վերաբերմունք և հավասար վարձունք երկու սեռերի նկատմամբ:

*Գենդերային հավասարությունը նպաստում է կայուն զարգացմանը, ժողովրդավարական գործընթացների խորացմանը և հասարակության կենսագործունեության կազմակերպմանը՝ բոլոր սոցիալական խմբերի իրական հավասարության, համերաշխության, համագործակցության և հանդուրժողականության հիման վրա, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործմանը և կյանքի որակի բարձրացմանը:*

*Յուրաքանչյուր տարբերակի բոլոր տեսակի ազդեցությունները պետք է գնահատվեն: Այս ամենը զգուշորեն կշռադատելուց հետո կարող ենք ձևակերպել միջամտությունը:*

### Ինչպես կոտրել անվստահությունը և ձեռք բերել գենդերային հարցերի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք

***Փաստարկներ:*** *Գենդերային զգայուն ռազմավարություններ ունենալու համար անհրաժեշտ է զինվել հնարավոր փաստարկներով և միջոցներով՝ դիմադրությանը պատրաստ լինելու համար: Դիմադրության դիմակայման տարբերակներից են.*

- ✓ *Երբ ցանկանում եք հաստատել որևէ ծրագիր կամ քաղաքականություն, որոշումներ կայացնողներին դիմեք կոնկրետ առաջարկներով, ցանկալի է գրավոր տեսքով: Այն դեպքերում, երբ ներկայացնում եմ՛ և՛ ծրագիր, և՛ բյուջե, ապա ցանկալի է առաջին հերթին ներկայացնել ծրագիրը, և երբ այն հաստատվի, կարելի է ներկայացնել բյուջեն: Անհրաժեշտ է կիրառել կոնկրետ տվյալներ և ուսումնասիրության արդյունքներ (նախընտրելի է մեր երկրի կամ մարզի մասին)՝ մեր փաստարկները հիմնավորելու համար: Հասկապես դժվար է պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ «Ինչո՞ւ է գենդերային հավասարությունը առաջնահերթություն այն ժամանակ, երբ երկրում տնտեսական ճգնաժամ է»: Այստեղ որոշումներ կայացնողներին անհրաժեշտ է ներկայացնել այն փաստարկը, որ գենդերային ուղղորդումը և գենդերային հավասարությունն օգնում է բարձրացնել ֆինանսական արդյունավետությունը, խնայել ֆինանսական միջոցները և ռեսուրսներն ուղղել կանանց և տղամարդկանց իրական կարիքների բավարարմանը՝ աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ:*
- ✓ *Շեշտը դրեք այն փաստարկի վրա, որ գենդերային ուղղորդումը միայն կանանց չի վերաբերում. այն վերաբերում է տղամարդկանց և հասարակությանը ընդհանուր առմամբ: Այս ձևով հնարավորություն է տրվում տղամարդկանց ավելի հանգիստ զգալ՝ որպես գենդերային ուղղորդման գործընթացի մի մաս, և հիշեցնել, որ նրանք նույնպես իրենց դերն ու պարտականություններն ունեն գենդերային հավասարություն ապահովելու և դրանից օգտվելու համար:*
- ✓ *Հիշեցրեք որոշում կայացնողներին, թե ինչպես են նրանք ուղղակիորեն շահում տվյալ առաջարկից, քանի որ այն բարձրացնում է նրանց դիրքը և վստահությունը (այսինքն՝ մեծանում է իրենց քաղաքական կապիտալը): Նման ձևով, կարևոր է ցուցաբերել դրական, և ոչ թե հակազդական վերաբերմունք, հասկանալ և հաշվի առնել այն սահմանափակումներն ու խոչընդոտները, որոնց առաջ կանգնում են որոշում կայացնողները: Անհրաժեշտ է փորձել միշտ առաջարկել «հաղթող-հաղթող» տարբերակներ:*
- ✓ *Փորձեք առաջարկել մի քանի տարբերակ, որոնցից որոշում կայացնողները հնարավորություն կունենան ընտրելու իրենց համար ամենահամապատասխանը: Ճկունությունը և փոխզիջման գնալու պատրաստակամությունն անշուշտ գործող տարբերակներ են: «Փորձարարական ծրագրերը» նույնպես լավ տարբերակ են, որոնք ծախսային առումով արդյունավետ տարբերակ են՝ ցույց տալու արդյունքներ, որոնք ապագայում կարող են կրկնօրինակվել:*

## Քայլ 7. Քարոզչական ռազմավարություններ. գենդերը կարևոր է

*Գենդերային ուղղորդման կարևորագույն ուղղություններից է քարոզչական ռազմավարությունների մշակումը, որոնք կաջակցեն գենդերային ուղղորդման նախաձեռնությունների իրականացմանը: Քանի որ փորձը ցույց է տալիս, որ որոշումներ կայացնողները*

*երբեմն չեն ցանկանում սուղ ռեսուրսները հատկացնել գենդերային հավասարությանն ուղղված միջոցառումներին, որոշումներ կայացնողները (հատկապես նրանք, ովքեր վերահսկում են բյուջեները) պետք է համոզված լինեն, որ գենդերային հավասարության ծրագրերում իրենց կատարած ներդրումները կտան համարժեք արդյունքներ:*

*Որոշումներ կայացնողներին հարկավոր է ներկայացնել այնպիսի տեղեկություն, որտեղ հակիրճ և հստակ կերպով ներկայացվում է գենդերային հավասարության կարևորությունը: Այլ կերպ ասած, հարկավոր է լուսաբանել, թե գենդերային հավասարությունը ինչպիսի զարգացման խնդիրների լուծմանն է նպաստում, և թե ինչպես կառավարությունը, անհատները (կանայք և տղամարդիկ) և ամբողջ ազգը կշահեն գենդերային հրազեկվածության բարձրացման արդյունքում: Լավ ձևակերպված հիմնավորումներն ու փաստարկները մեծացնում են ցանկացած պլանավորած միջամտության համար ֆինանսական և քաղաքական աջակցություն ստանալու հնարավորությունները:*

## Քայլ 8. Մոնիթորինգ. ուշադրության կենտրոնացում գենդերային հարցերին

*Մոնիթորինգը գենդերային ուղղորդման անբաժանելի մասն է: Մոնիթորինգի երեք բնագավառներն են.*

1. ***մոնիթորինգի մակարդակները,***
2. ***գենդերային զգայուն մոնիթորինգի պլանները,***
3. ***գենդերային զգայուն թիրախները և ցուցանիշները:***

**Մոնիթորինգի մակարդակները**

*Մոնիթորինգը հարկ է իրականացնել երկու տարբեր մակարդակներում.*

- ✓ **հիմնական նպատակների և խնդիրների իրականացման առաջընթացի մոնիթորինգ, և**
- ✓ **իրականացման գործընթացի մոնիթորինգ:**

*Երկու մակարդակներում էլ անհրաժեշտ է սահմանել նպատակներ և մշակել ցուցանիշներ՝ այդ նպատակների իրականացման առաջընթացը չափորոշելու համար:*

*Հիմնական նպատակների և խնդիրների իրականացման առաջընթացի մոնիթորինգի ժամանակ ցուցանիշները մշակվում են՝ հետևելու սահմանված ուղղակի արդյունքների (միջոցառումների) և վերջնական արդյունքների (ազդեցության) ձեռքբերումները:*

*Իրականացման գործընթացի մոնիթորինգի ժամանակ թիրախները և ցուցանիշները մշակվում են՝ հետևելու, թե գործընթացն ինքնին որքանով է գենդերային զգայուն (որքանով են գործընթացում հաշվի առնվում գենդերային խնդիրները): Մոնիթորինգի գործընթացը հնարավորություն է տալիս՝*

- ✓ *հայտնորոշել այն խոչընդոտներն ու բացերը, որոնք հնարավոր է միանգամից կարգավորել,*
- ✓ *բարելավել հետագա նախաձեռնությունների մշակումը,*
- ✓ *գրանցել ուղղորդման խոչընդոտները, որոնք հնարավոր է ավելի ուշ հասցեագրել ավելի ընդլայնված ինստիտուցիոնալ համատեքստում:*

*Մոնիթորինգի գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հարցերը.*

- ✓ *Արդյո՞ք կանայք և տղամարդիկ հավասարապես են մասնակցում ծրագրի որոշումների կայացման գործընթացներին:*
- ✓ *Արդյո՞ք կանանց և տղամարդկանց հավասարապես հարգում են՝ որպես որոշումներ կայացնողներ, իրականացնողներ և մասնակիցներ:*
- ✓ *Արդյո՞ք ծրագրի իրականացման գործընթացում ընդգրկված անհատներին մասամբ խրախուսում են պահպանելու գենդերային համաչափությունը (օրինակ՝ ընձեռելով հնարավորություններ՝ բարձացնելու իրենց գենդերային ոլորտի գիտելիքներն ու հմտությունները և քննարկելու գենդերային հարցերն անմիջական և ոչ ֆոնային միջավայրում):*

**Գենդերային զգայուն մոնիթորինգի պլաններ**

*Ե՛վ հիմնական առաջընթացի, և՛ իրականացման գործընթացի մոնիթորինգի պլանները պետք է մշակվեն և ընդգրկվեն միջամտությունը ներկայացնող փաստաթղթում: Նման պլաններում սահմանվում են՝*

- ✓ *ո՞վ է պատասխանատու մոնիթորինգի իրականացման համար,*
- ✓ *ինչպե՞ս են այլ շահագրգիռ կողմեր (օրինակ՝ գենդերային փորձագետներ) մասնակցելու մոնիթորինգի գործընթացում,*
- ✓ *ի՞նչ գործիքներ են կիրառվելու՝ դիտարկումներն արձանագրելու համար,*
- ✓ *ինչպիսի՞ առաջընթացի ուսումնասիրման մեխանիզմներ գոյություն ունեն (պարբերաբար իրականացվող գնահատումներ կամ վերանայումներ):*

## Գենդերային զգայուն թիրախներ և ցուցանիշներ

### Թիրախներ

*Թիրախները սահմանվում են, որպեսզի նպատակների իրականացումն ավելի տեսանելի լինի: Թիրախները նպատակներն ավելի կոնկրետ են դարձնում՝ այդպիսով մեծացնելով դրանց ձեռքբերման հնարավորությունները: Կոնկրետ թիրախները նաև մեծացնում են դրանց ձեռքբերման համար անհրաժեշտ կոնկրետ ռեսուրսների (մարդկային, ֆինանսական) հասկացումները:*

**Արդյունավետ թիրախներն են՝**

- ✓ *պրոգրեսիվ, սակայն իրատեսական,*
- ✓ *սահմանված ժամկետներով,*
- ✓ *չափելի:*

***Նկատառում.*** *գենդերային հարցերի ինտեգրումը նշանակում է, որ արդյունավետ թիրախները նույնպես պետք է գենդերային զգայուն լինեն, այսինքն՝ հաշվի առնեն և՛ կանանց, և՛ տղամարդկանց կարիքները տվյալ իրավիճակում:*

### Ցուցանիշներ

*Թիրախների ձեռքբերման առաջընթացը պետք է հասկորոշվի կոնկրետ ցուցանիշների օգնությամբ:*

***Արդյունավետ ցուցանիշներն են՝***

- ✓ ***ժամկետային*** *– համեմատելի ցուցանիշները, որոնք չափորոշվում են միայն մեկ անգամ, չեն կարող ցույց տալ այլ երկրների, մարզերի կամ թիրախային խմբերի հետ*

*համեմաս առաջընթացը կամ հեսընթացը:*

- ✓ ***չափելի*** *– անհրաժեշտ է կարողանալ հաշվել կամ դասակարգել արդյունքները:*
- ✓ *գ**ծեգրիs** –ընsրեf այնպիսի ցուցանիշներ, որոնց միջոցով արտահին և բնատահիտանական գործոնները, այլ ոչ թե նրանք, որ մենք հուսով ենք չափորոշել, նվազեցվում են:*
- ✓ ***ծեգrsnrեն ընsրված և sվյալ hաrցը ներկայացնող*** *– դժվար է հեsևել չափազանց մեծ թվով ցուցանիշներին:*

***Նկատառում.*** *այն ծրագրերում և քաղաքականություններում, որոնց համար իրականացվել է գենդերային ուղղորդում, բոլոր ցուցանիշները, որտեղ որ հնարավոր է, պետք է բաժանված լինեն ըստ սեռերի: Սա հնարավորություն կտա հասկորոշել մեր միջամտությունների ազդեցությունն՝ տարբերակված ըստ գենդերի:*

*Ցուցանիշների տեսակները. գոյություն ունեն ցուցանիշների դասակարգման շատ տարբեր ձևեր: Այս աղյուսակը կարող է օգնել ընտրել այն ցուցանիշները, որոնք առավելագույնս օգտակար կլինեն՝ մեր կողմից ձևակերպված «մոնիթորինգային հարցերին» պատասխանելու համար:*

**Աղյուսակ 1. Հարցաշարի և վիճակագրական ցուցանիշներ**

| Նկարագրությունը | Առավելություններ | Խոչընդոտներ | Օրինակներ |
|---|---|---|---|
| **Հարցաշարի ցուցանիշներ** | | | |
| Հարցրեք, թե արդյոք որևէ բան գոյություն ունի, թե ոչ: Չափորոշիչը կարող է ընդգրկել «այո» կամ «ոչ» պատասխան: | Օգտակար է մոնիթորինգային գործընթացների, քաղաքական կամքի արտահայտումների և պարտավորությունների համար: Տվյալների հավաքագրման պարզ և էժան մեթոդ: | Բացակայում է որակական ուղղությունը: Երբեմն առկա է մեկնաբանության խնդիր: | Արդյո՞ք Ձեր երկրում գոյություն ունի գենդերային ուղղորդման քաղաքականություն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում: ✓ Արդյո՞ք ՀԳԾ ազգային հաշվետվությունը պատրաստելիս օգտվել եք գենդերային փորձագետի խորհրդատվությունից: |
| **Վիճակագրական ցուցանիշներ** | | | |
| «Ավանդական» ցուցանիշներ, որոնց միջոցով չափորոշվում են փոփոխությունները՝ կիրառելով առկա վիճակագրական տվյալները: | Տեղեկություններն առկա են և հասանելի: | Հազվադեպ է տրամադրում որակական ցուցանիշներ: Հաճախ հարկ է բացը լրացնել մյուս երկու տեսակի ցուցանիշներով | ՄԻԱՎ-ի առկայության տոկոսը կանանց և տղամարդկանց մոտ: ✓ Կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակները, և այլն: |

| Ցուցանիշներ, որոնք պահանջում են տվյալների հավաքագրման հատուկ ձևեր | | | |
|---|---|---|---|
| Պահանջվում է տվյալ-ների հավաքագրման հատուկ միջոցներ (սո-ցիոլոգիական ուսում-նասիրություններ, հար-ցազրույցներ, և այլն): Պահանջվում է հատուկ և վերարտադրվող մեթո-դաբանություն, որը հնարավորություն կտա ժամանակի ընթացքում համեմատել տվյալները: | Տվյալները հաճախ չափազանց օգտակար են և հատուկ: Որակական տվյալների հավաքագրման լավ մեթոդ է: | Հաճախ պահանջում են մեծ ռեսուրսներ (ժամանակ, գումար, մարդկային ռեսուրսներ): | Բնակչության %, որը կար-ծում է, որ հիմնականում և առաջին հերթին կանայք են պատասխանատու երե-խաների խնամքի համար: Բնակչության %, որը կար-ծում է, որ կանայք պետք է/պետք չէ լինեն որևէ կոնկ-րետ ոլորտում որոշումներ կայացնողներ: ✓ Թերթերում հրապա-րակված աշխատանքային հայտարարությունների %-ը, որտեղ առկա է գենդերային խտրականություն: |

**Որակական և քանակական ցուցանիշներ.** *Իմանալով որակական և քանակական ցուցանիշների տարբեր կիրառումների և աղբյուրների մասին՝ հնարավորություն է ըն-ձեռնվում մշակել համապատասխան ցուցանիշներ և հավաքագրել տվյալներ:*

**Աղյուսակ 2. Որակական և քանակական ցուցանիշներ**

| Որակական ցուցանիշներ | Քանակական ցուցանիշներ |
|---|---|
| **Որակական ցուցանիշները** կարելի է սահմանել որպես մարդկանց դատողություններ և ընկալումներ որևէ թեմայի շուրջ: Դրանք օգտակար են գործըն-թացները հասկանալու համար, սակայն հաճախ ցույց չեն տալիս, թե որքանով են արտահայտված տեսակետները ընդունված և տարածված: | **Քանակական ցուցանիշները** կարելի է սահմանել որպես քանակական չափո-րոշիչներ (ընդհանուր թվեր, տոկոսներ, և այլն): Դրանք օգտակար են ցույց տալու միջին վերջնական արդյունքը, կամ նպա-տակի կամ խնդիրների իրականացման աստիճանը: |
| **Ընդհանուր աղբյուրներ** | **Ընդհանուր աղբյուրներ** |
| ✓ հասարակական լսումներ<br>✓ թիրախային խմբեր<br>✓ վերաբերմունքի մասին ուսումնասիրություններ և հարցազրույցներ<br>✓ մասնակցային գնահատումներ<br>✓ մասնակիցների դիտարկումներ<br>✓ սոցիոլոգիական և մարդաբանական աշխատանքներ | ✓ մարդահամարներ<br>✓ աշխատուժի ուսումնասիրություններ<br>✓ վարչարարական արձանագրություններ<br>✓ թիրախային խմբերին ուղղված սոցիոլոգիական ուսումնասիրություններ |

## Քայլ 9. Գնահատում. ի՞նչ արդյունավետությամբ ենք աշխատել

*Այս բաժնում է ներկայացվում մոնիթորինգի գործընթացի գագաթնակետը: Այս բաժինը կարևոր է լավագույն պրակտիկա հիմնելու և ձեր նախաձեռնությունից դասեր քաղելու համար, որի հիմնական նպատակն է հետագայում բարելավել նախաձեռնությունները: Գնահատումը նաև օգտագործված ռեսուրսների դիմաց հաշվետվողականության միջոց է:*

**Գնահատման երեք մակարդակները ներառում են՝**

1. ***Ուղղակի արդյունքների գնահատում*** **-** *(Արդյո՞ք մեր առջև դրված խնդիրները լուծվել են)*
2. ***Վերջնական արդյունքների գնահատում*** - *(Որքանո՞վ է զարգացման նպատակն իրականացվել)*
3. ***Գործընթացի գնահատում*** **-** *(Ինչպե՞ս են ձեռք բերվել ուղղակի և վերջնական արդյունքները):*

*Գենդերային ուղղորդման համար անհրաժեշտ այն հիմնական հարցերը, որոնք պետք է հաշվի առնվեն գնահատման բոլոր մակարդակներում, ներառում են՝*

**Գնահատման չափանիշները**

- ✓ *Ո՞վ է սահմանում գնահատման չափանիշները:*
- ✓ *գ Ի՞նչ մակարդակի կարևորություն կամ առաջնահերթություն է հնարավոր տալ գենդերային հավասարության հարցերին:*

**Գնահատումն իրականացնողները**

- ✓ *Արդյո՞ք գնահատողների Տեխնիկական առաջադրանքներում սահմանվում է գենդերային փորձագետ ունենալու անհրաժեշտությունը:*
- ✓ *Արդյո՞ք բոլոր շահագրգիռ կողմերն են ընդգրկված գնահատման գործընթացում:*
- ✓ *Ո՞վ է տրամադրելու գնահատման անհրաժեշտ տվյալները:*
- ✓ *Արդյո՞ք հաշվի են առնվելու և՛ կանանց, և՛ տղամարդկանց կարծիքները:*
- ✓ *Ո՞վ է պատասխանատվություն կրելու տվյալները հավաքագրելու և տարբեր կարծիքների կամ դիտարկումների հիմնավորությունը և առաջնահերթությունը հաշվի առնելու համար:*

**Գնահատաման գործընթացը**

- ✓ *Արդյո՞ք կիրառվելու են մասնակցային մեթոդներ:*
- ✓ *Ինչպե՞ս և ո՞ւմ են ներկայացվելու գնահատման արդյունքները:*
- ✓ *Արդյո՞ք և՛ կին, և՛ տղամարդ շահագրգիռ կողմերին հնարավորություն կտրվի պատշաճ ձևով հայտնել իրենց նկատառումները կամ նշել իրենց դիտարկումները գնահատման արդյունքների վերաբերյալ:*

**«Գենդերային օրակարգի» պահպանումը**

*Շատ հաճախ, հենց կարևոր գենդերային զգայուն նախաձեռնությունները հասցվում են ավարտին, գենդերային հարցերն այլևս անհետանում են քաղաքականության օրակարգից: Քանի դեռ գենդերային հարցերը դուրս են մնում քաղաքականության օրակարգից, գենդերային դերերի և հարաբերությունների փոխակերպումները, որոնք հանգեցնում են գենդերային ավելի մեծ հավասարության և դրական արդյունքների ամբողջ ազգի համար, ընդմիշտ դուրս կմնան մեր ուշադրության կենտրոնից:*

*Գենդերային ուղղորդման աշխատանքների կայունությունն ապահովելու համար, հարկ է հաշվի առնել հետևյալը՝*

- ✓ *Ինչպե՞ս է ձեր նախաձեռնությունն իր տեղը գտնում ընդհանուր «պատկերի» մեջ, այսինքն՝ կառավարության ավելի համապարփակ ծրագրերի և քաղաքականությունների շրջանակներում: Ձեր նախաձեռնությունը շարունակականություն ապահովելու ինչպիսի՞ նախնական և լրացուցիչ միջոցառումներ է առաջարկում:*

*Արդյո՞ք ձեր գնահատման մեջ առկա են հետագա միջոցառումների կոնկրետ առաջարկներ: Ինչպիսի՞ քայլեր կարելի է ձեռնարկել՝ նախաձեռնության շարունակականությունն ապահովելու համար:*

- ✓ *Արդյո՞ք ձեր գնահատումն իր հնարավոր ներդրումը կունենա այլ նախարարությունների կամ ավելի ընդլայնված շահագրգիռ կողմերի համար:*

*Ինչպե՞ս եք հաղորդակցելու այդ ներդրումները: Կարող եք արդյո՞ք առաջարկել կոնկրետ սկզբնական գործողություններ:*

- ✓ *Արդյո՞ք ձեր նախաձեռնությունների իրականացման գործընթացը և արդյունքները գրանցում եք այնպիսի ձևով, որը կերաշխավորի դրանց մասին հիշողությունը ինստիտուցիոնալ մակարդակով:*
- ✓ *Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս և ո՞ւմ եք հաղորդում ձեր նախաձեռնությունների արդյունքները:*

## Քայլ 10. Գենդերային հաղորդակցում

*Հաղորդակցման ոլորտն իմնին տեսք է լինի «ուղղորդված» կամ ինտեգրված քաղաքականության կամ ծրագրի բոլոր փուլերում: Հաղորդակցումը այլ շահագրգիռ կողմերի հետ անհրաժեշտ է բոլոր փուլերում և բոլոր մակարդակներում: Ցանկացած դեպքում, մեր հաղորդակցման ձևը, լինի դա պրո-ակտիվ, թե ռեակտիվ, իր ազդեցությունը կունենա ծրագրի կամ քաղաքականության հաջողության վրա:*

*Հաղորդակցումն իր մեջ ներառում է նաև այնպիսի ռազմավարական նպատակներ, ինչպիսիք են իրազեկվածության բարձրացումը, քարոզարշավը, թափանցիկության խրախուսումը և լավագույն գործելակերպի փոխանակումը: Գենդերային ուղղորդման կարևորագույն ուղղություններից է արդյունավետ հաղորդակցման ռազմավարությունների ու գործելակերպերը, որտեղ հաշվի են առնվում կանանց և տղամարդկանց (որպես հաղորդակցման տրամադրողներ, ընդունողներ և սուբյեկտներ) տարբեր կարիքները տարբեր իրադրություններում: Արդյունավետ գենդերային ուղղորդում իրականացնելու խոչընդոտներից է տարբեր մակարդակներում տեղեկացվության պակասը, այդ թվում՝*

- ✓ *իրադրության մասին՝ գենդերային տեսանկյունից,*
- ✓ *գենդերային հավասարությանը վերաբերող պետական կամ կազմակերպությունների մանդատների վերաբերյալ,*
- ✓ *գենդերային հավասարությանն ուղղված քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ,*
- ✓ *գենդերային հավասարությունը խրախուսող շահագրգիռ մարմինների և այլ դերակատարների մասին:*

*Մեր դերն է նաև մշակել և իրականացնել արդյունավետ հաղորդակցության ռազմավարություններ՝ հասարակության տարբեր խմբերի համար նշված տեղեկատվական բացերը փակելու համար: Այս հասարակության խմբերի թվում են՝*

- ✓ *բարձր մակարդակում քաղաքականություն մշակողներ և որոշումներ կայացնողներ,*
- ✓ *այլ քաղաքականություն մշակողներ,*
- ✓ *քաղաքացիական հասարակության տարբեր խմբեր (տղամարդիկ, կանայք, ակտիվիստներ, գիտական աշխատողներ, և այլն),*

- ✓ *Ավիրատու կազմակերպություններ և զարգացման գործընկերներ:*

**Գենդերային հարցերի շուրջ տեղեկացված հասարակության ստեղծում**

*Հաղորդակցման ռազմավարությունների մշակման ժամանակ գենդերային հարցերը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ընդգծել այն տարբեր ուղիները, որոնց միջոցով կանայք և տղամարդիկ արձագանքում են տարբեր հաղորդագրությունների/տեղեկությունների: Հաղորդակցման ռազմավարությունների գենդերային վերլուծության ընթացքում անհրաժեշտ է տալ հետևյալ հիմնական հարցադրումները՝*

- ✓ *Արդյո՞ք կանայք և տղամարդիկ ընթերցում են տարբեր հրատարակումներ:*
- ✓ *Արդյո՞ք կանայք և տղամարդիկ դիտում կամ լսում են տարբեր էլեկտրոնային լրատվական միջոցներ:*
- ✓ *Արդյո՞ք լրատվական միջոցների սպառողական միտումները (հաճախականությունը, ժամանակը) տարբեր են կանանց և տղամարդկանց համար:*
- ✓ *Արդյո՞ք կանայք և տղամարդիկ ունեն վստահելիության տարբեր չափանիշներ (կապված «հեղինակությունների», կիրառվող փաստարկների, և այլնի հետ):*
- ✓ *Արդյո՞ք կանայք և տղամարդիկ ունեն տարբեր արժեքներ, որոնց պատճառով կոնկրետ հաղորդագրությունների տարբեր ձևով են արձագանքում:*

**Գենդերային ուղղորդման ոլորտում կատարված առաջընթացի մասին հաղորդելու հնարավոր ձևերն են՝**

- ✓ ***Գենդերի վերաբերյալ տարեկան հաշվետվության պատրաստում:*** *Կառավարության կողմից նման հաշվետվության պատրաստումը կարող է վիճակագրական տվյալների կարևոր աղբյուր լինել և լայն հասարակությանը կատարված առաջընթացի մասին տեղեկություններ հայտնելու արդյունավետ գործիք: Նման հաշվետվությունը կարող է պատրաստվել կամ սեփական գենդերային մասնագետի կողմից, կամ էլ կարելի է այն պատվիրել որևէ վերլուծական կազմակերպության կամ ՀԿ-ի:*
- ✓ ***Էլեկտրոնային լրատվական միջոցների կիրառում:*** *Համացանցի և էլեկտրոնային փոստի կիրառումը (էլեկտրոնային փոստի միջոցով քննարկումների ցանցեր, կայքերի ռեսուրսներ և «վիրտուալ քննարկումներ») կարող է ֆինանսապես և նպատակային առումով արդյունավետ միջոց լինել՝ հաղորդակցման բացերը փակելու համար:*
- ✓ ***Գենդերային քաղաքականության ռեսուրս կենտրոնի հիմնում:*** *Նման կենտրոնի ստեղծումը, որտեղ կհավաքագրվեն գենդերային քաղաքականության վերաբերյալ հաշվետվություններ, տեղեկագրեր, գրքեր և այլ տեղեկություններ, կարող է գենդերային ուղղորդումն ավելի արդյունավետ դարձնել և նպաստել ազգային մակարդակով կառավարման ոլորտում գենդերային հարցերի պրոֆիլի հզորացմանը:*

## Գենդերային ուղղորդման հարցաշար՝ ծրագրերի կամ քաղաքականության փաստաթղթերի վերլուծության համար

**Աղետների ռիսկի նվազեցման ցանկացած ծրագիր կամ քաղաքականություն վերլուծելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հարցերը՝ նշված փաստաթղթերը գենդերային զգայուն դարձնելու համար:**

- ✓ **Ներածություն և հիմնավորում:** Արդյո՞ք գենդերային հարցերը նկարագրված եք փաստաթղթի ներածական բաժնում: Արդյո՞ք իրավիճակային վերլուծության բոլոր տվյալները ներկայացված են ըստ սեռերի բաշխվածության: Արդյո՞ք հիմնավորման

մեջ ներկայացված են գենդերային ուղղորդման և գենդերային հավասարության համոզիչ փաստարկներ:

**Նպատակները:** *Արդյո՞ք առաջարկվող միջամտության նպատակը (քաղաքականություն, ռազմավարություն, ծրագրային առաջարկ, և այլն) արտացոլում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց կարիքները: Արդյո՞ք նպատակով նախատեսված է վերացնել գենդերային անհավասարությունները՝ կանանց և տղամարդկանց գործնական կարիքները հասցեագրելու միջոցով: Արդյո՞ք նպատակով նախատեսված է փոխակերպել այն հաստատությունները (սոցիալական և այլն), որոնք տարածում են գենդերային անհավասարություն:*

*Օրինակ՝ հետևյալ հարցադրումները կարող են օգտագործվել նախարարության կողմից ազգային ռազմավարություններ կամ ԱՌՆ միջամտություններ պլանավորելիս՝ կանանց և տղամարդկանց կարիքները դրանց մեջ ներառելու համար:*

- ✓ Արդյո՞ք ԱՌՆ ազգային քաղաքականություններում և ռազմավարություններում տեղ գտած գենդերային ոլորտի խնդիրների հասցեագրումը գտնվում է նախարարության պատասխանատվության տակ (բնապահպանության, տարածքային կառավարման, արտակարգ իրավիճակների, և այլն):
- ✓ Արդյո՞ք աղետներին վերաբերող քաղաքականությունները և ծրագրերը պլանավորվում և իրականացվում են նախարարության պատասխանատվության ներքո, և արդյո՞ք դրանց մեջ հաշվի են առնվում գենդերային հարցերը:
- ✓ Արդյո՞ք առկա են ընդհանուր գենդերային ուղղորդման քաղաքականություններ նախարարության պատասխանատվության և գործառնությունների շրջանակներում:
- ✓ Քանի՞ կին է աշխատում նախարարությունում, և որո՞նք են նրանց վարչական մակարդակը և գործառնությունները: Արդյո՞ք նրանք ընդգրկված են որոշումների կայացման, և ավելի կոնկրետ՝ աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում:
- ✓ Արդյո՞ք արտակարգ իրավիճակների կանխարգելման, պատրաստվածության, արձագանքման և վերականգնման ժամանակ հաշվի են առնվում գենդերի գործոնը և կանանց և տղամարդկանց խոցելիության գնահատումը:
- ✓ Արդյո՞ք ռիսկի գնահատման և արտակարգ իրավիճակների պատրաստվածության ծրագրերը մշակվում են՝ կիրառելով գենդերային զգայուն մոտեցումներ և գենդերային բաշխվածությամբ տվյալների հավաքագրման մեթոդաբանություններ:

- ✓ **Շահառուների թիրախային խմբեր:** Բացի այն դեպքերից, երբ միջամտությունները նպատակաուղղված են կոնկրետ կանանց և տղամարդկանց՝ որպես գենդերային հավասարության ընդլայնման միջոց, գոյություն ունի արդյո՞ք գենդերային հավասարություն շահառուների թիրախային խմբում:
- ✓ **Խնդիրները:** Արդյո՞ք միջամտության խնդիրները հասցեագրում են և՛ կանանց, և՛ տղամարդկանց կարիքները:
- ✓ **Միջոցառումները:** Արդյո՞ք պլանավորված միջոցառումներում ընդգրկված են և՛ տղամարդիկ, և՛ թե կանայք: Արդյո՞ք անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ, որոնք կպահովեն գենդերային հարցերի հստակ ներկայացումը (օրինակ՝ գենդերային հարցերի վերաբերյալ դասընթացներ, լրացուցիչ ուսումնասիրություններ, և այլն):

- ✓ **Ցուցանիշներ:**
  - ✓ Մշակվել են արդյո՞ք համապատասխան ցուցանիշներ՝ յուրաքանչյուր նպատակի իրականացման առաջընթացը չափորոշելու համար:
  - ✓ Արդյո՞ք այս ցուցանիշները չափորոշում են յուրաքանչյուր նպատակի գենդերային գործոնները: Արդյո՞ք մշակված ցուցանիշները բաժանված են ըստ գենդերային ուղղվածության:
  - ✓ Արդյո՞ք սահմանված են այնպիսի քիրախներ, որոնք կերաշխավորեն գենդերային հավասարության բավարար մակարդակ իրականացվող միջոցառումներում (օրինակ՝ տղամարդկանց և կանանց մասնակցության քվոտաներ, և այլն):
- ✓ **Իրականացումը:** Ո՞վ է իրականացնելու պլանավորված միջոցառումը: Արդյո՞ք բոլոր գործընկերներն անցել են գենդերային ուղղորդման համապատասխան դասընթացներ, որը կպահովի գենդերային գործոնների հաշվառումը միջոցառման իրականացման ողջ ընթացքում: Արդյո՞ք կանայք և տղամարդիկ հավասարապես կմասնակցեն միջոցառման իրականացմանը:
- ✓ **Մոնիթորինգ և գնահատում:** Արդյո՞ք մոնիթորինգի և գնահատման ռազմավարությունը ներառում է գենդերային հարցերը: Արդյո՞ք ուսումնասիրվելու են միջոցառման և՛ բովանդակային, և՛ վարչարարական (գործընթացների) կողմերը:
- ✓ **Ռիսկերը**: Արդյո՞ք հասարակության մեջ գենդերային դերերի և հարաբերությունների գենդերային գործոնը համարվում է որպես հնարավոր ռիսկ (այսինքն՝ կարծրատիպեր կամ կառուցվածքային խոչընդոտներ, որոնք կարող են կանխել որևէ գենդերի ամբողջական մասնակցությունը): Արդյո՞ք հաշվի է առնվել միջոցառման հնարավոր բացասական ազդեցությունը (օրինակ՝ կանանց բեռի հնարավոր մեծացում, կամ տղամարդկանց սոցիալական մեկուսացում):
- ✓ **Բյուջեն:** Արդյո՞ք գնահատվել են ֆինանսական ներդրումները՝ ապահովելու, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ շահեն պլանավորված միջոցառման իրականացումից: Արդյո՞ք բյուջեում հաշվի է առնվել գենդերային զգայունության դասընթացների կամ կարճաժամկետ գենդերային փորձագետների ներգրավման անհրաժեշտությունը:
- ✓ **Հավելվածներ:** Արդյո՞ք համապատասխան ուսումնասիրությունները (կամ քաղվածքները) ներառված են որպես հավելվածներ (հատկապես նրանք, որոնք հսակ հիմնավորում են գենդերի ուղղությամբ տարված աշխատանքը):
- ✓ **Հաղորդակցման ռազմավարությունը:** Մշակվել է արդյո՞ք հաղորդակցման ռազմավարություն՝ հասարակության տարբեր խմբերին տեղեկացնելու ծրագրի առկայության, առաջընթացի և արդյունքների մասին՝ գենդերային տեսանկյունից:

## Գենդերային զգայուն օրենսդրության մշակում

*Հետևյալ հարցերը ծառայում են «նախագծի» օրինակ՝ գենդերային հավասարությունը օրենքի միջոցով երաշխավորելու համար: Այնուամենայնիվ, անհնար է առաջարկել մեկ բանաձև, որը կհամապատասխանի բոլորի կարիքներին: Ամեն երկիր պետք է իր սեփական ուղին հարթի դեպի գենդերային հավասարությունը ԱՌՆ օրենքների, քաղաքականությունների և ազգային ծրագրերի միջոցով՝ հաշվի առնելով միջազգային չափա-*

*նիշները և ազգային առանձնահատկությունները:*

*Հարցերը/հարցաշարերը կարող են մշակվել աղետների ռիսկի նվազեցման օրենսդրության վերլուծության կամ արտակարգ իրավիճակների կառավարման համար, և պետք է հասցեագրեն հետևյալ խնդիրները՝*

(ա) բացահայտել գործող օրենսդրության մեջ առկա գենդերային խտրականության դեպքերը,

(բ) բացահայտել օրենսդրական բացերը կամ գենդերային հավասարության խրախուսմանն ու պաշտպանությանն ուղղված կոնկրետ օրենսդրության բացակայությունը,

(գ) առաջարկել նման բացերի և խտրականության դեպքերի հասցեագրման ուղիներ:

## Աղբյուրներ


- ԱՌՆ ժամանակ գենդերային զգայունությունը: Քաղաքական և գործնական ուղեցույցներ: ՄԱԶԾ, Բնության Պահպանման Միջազգային Միություն, և ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն, Շվեյցարիա, հունիս 2009թ.
- Գենդերային ուղղորդման գործնական կիրառումը. մեթոդաբանական ձեռնարկ: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Եվրոպայի և ԱՊՀ երկրների տարածքային բյուրոյի հետ համագործակցությամբ, 2007թ.
- Գենդերային ուղղորդման ուղեցույցներ՝ ազգային քաղաքականության մշակման և իրականացման համար, Հանոյ, 2004թ.
- www.preventionweb.net
- www.undp.org
- Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգ (ընդունված 2010թ.), http://www.genderbasedviolence.am/en/content/show/55/national-documents-on-gender-and-gbv.html
- Փոքրիկից տուժած կանանց համաշխարհային հիմնադրամ. բնական աղետների ազդեցությունը կանանց վրա: Լին Չու և Կավիտա Ն. Ռամդաս(2005)
- Ե. Էնարսոն, Սոցիալական արդարության խրախուսումը աղետների վերակառուցման գործընթացում. գենդերային զգայուն և համայնքային պլանավորման ուղեցույցներ (Հաշվետվություն Գուջարատից, Հնդկաստան), 2001թ.